

«Ասկէ զատ ֆրանկախտաւոր մը պարտի իր սիֆիլիսէ վարակումն ըլլալը յայտնել բժիշկին, ամէն անդամ որ կասկածելի հիւանդութիւն մը կամ ախտանիշ մը երեւան զայ, իր կնոջ կամ զաւակներուն վրայ:

«Սիֆիլիսը շատ ծանր հիւանդութիւն մըն է անոնց համար որոնք չեն դարմանուիր կամ գէշ ու անկանոն կը դարմանուին:


«Սիֆիլիսը շատ թիթեւ հիւանդութիւն մըն է անոնց համար որոնք զօրաւոր, կանոնաւոր և երկարատես դարմանումի ենթարկուելու համբերութիւնը կ'ունենանաւ:

Երիտասարդ զոհս համոզուած երեւոյթով մը մեկնեցաւ բժիշկին քովին: Սակայն քիչ յետոյ ինքնիրեն կ'ըսէր. «Ամիսներէ ի վեր ոչ ցաւ ունիմ, ոչ վէրք, արիւնս ալ մաքուր է. ալ ինչո՞ւ չպիտի ամուսնանամ:

Ահա թէ ինչպէս՝ կը շատնան զոհերս և կը տարածեմ տիրապետութիւնս մարգկութեան վրայ:

(Տարունակելի)

ԲԺ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ



Հ. Ս. Ը. Ի. ՊԱՏԿՍ.
Ժ Ո Ղ Ո Վ Ը

Սեպտեմբեր 16—20, Փարիզի մէջ գումարուեցաւ Հ.

Ս. Ը. Ս. Արևմտեան Երոպայի Երգանային ժողովը, որուն կը մասնակցիին նաև. ՀՕԿի մարզական մասնաճիւղերը և Հայ Մարզական միութիւնը:

Պատգ. ժողովը տուաւ անմիջական և դրական արդիւնք մը, այն է՝ զանազան անուններու տակ իսու ու ինն ցրուած, ու ատոր հետեւանդրով իսկ հայ մարզական կեանքը ամուլ դարձնող, բազմաթիւ մարզական միութիւններու ծուլումը Հ. Ս. Ը. Ս. ի դրաշին տակ:

Մասնաւոր գոհունակութեամբ կ'արձանագրենք մարզական ուժերու միացման իրողութիւնը և կը շնորհաւորենիք Պատգ. ժողովը այս յաջողութեան համար, որ առաջին քայլը կը կազմէ դէպի գործնական ու արդիւնաւոր աշխատանք:

Այս առնիւ բանից մեր տեսակետը յայտնած ենք, ըստ որ Հ. Ս. Ը. Ս. ի նապահելը պէտք է ըլլայ ոչ թէ ախոյեաններ կազմել, այլ ֆիզիքական կրթութիւն տալ ամրող սերունդին: Իր ծրագիրն իսկ այս կը տրամադրէ: Սեպտ. 18ի տարեկան ոլիմպիականը, միամիներուն նման, մեծ մասամբ ծանօթ ախոյեաններու տողանցք մը եղաւ: Կը յուսանք որ նորմնտիք Երջ. Վարչութիւնը, Հ. Ս. Ը. Ս. ի բուն ծրագրին իրականացումը կը հիւանդանդէ, և յառաջիկայ Սեպտեմբերին մեզ ցոյց կուտայ ոչ թէ ախոյեաններ, այլ հարիւրաւոր մարգիլներ և առողջ երիտասարդութիւն մը: Առ այդ յաջողութիւն կը մալթենք: